

ՏԵՂԵԿԱԾՈՒ

DEGHEGADOU

ԴԵԳԻԿԱԾՈՒ

Հրատարակութիւն Գահիբեկ ՀԲԸ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՅԻՇԱՏՎԱԿԻ ՆԿԱՐ
ՀՄԼՄ ՆՈՒՊԱՐԻ ՖՈՒԹ-ՊՈԼԻ Դ-ԱՇՏԻՆ ԲԱՑՈՒՄԻՆ ԱՌ-ԻԹ-ՈՎ
(Հոգեստր Պետքեր, ՀՀ Դեսպան, Կմրահայրեր և Վարչութիւն)



2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԳԵՐԱԶԱՆՑԻԿՆԵՐԸ

Պաշտօնաթերթ Գահիրէն
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան
Հեռախոս: 22916444 - 24151127 - 24152478
Հեռապատճեն: 22916916

Periodical published by
Armenian General Benevolent Union - Cairo
Tel.: 22916444 - 24151127 - 24152478
Fax: 22916916
e-mail: agbuegypt@gmail.com
www.agbuegypt.com

نشرة دورية
لجمعية القاهرة الخيرية الأرمنية العامة
ت: ٢٤١٥٢٤٧٨ - ٢٤١٦٤٤٤
فакс: ٢٢٩١٦٩١٦

ԽՄԲԱԳԻՐ Ծաբէ Մարգարեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՃՐԱՑՏՈՒ Պերճ Թերզեան

ՍՐԲԱԳԻՇ ՎԵՐՍՈՒԳԻՇ Անայիս ճիզմէճեան

ԳԵՂԱՐՈՒԵՏԱՎԿԱՆ ԶԵՒԱԽՈՐՈՒՄ Ծահէ Լուսարարեան

ՀԱՍԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՃԱՐՈՒԱԾՔ Ծաբէ Մարգարեան Վաղոնիկի Արդինեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Nubar Printing Press

Թիւ 70 Նոր Շրջան ՅՈՒՆՈՒԱՐ 2014

Գահիրէն ՀԲԸՍ-ի
լուրերուն հետեւեցէք
www.agbuegypt.com
կայքէջով

«Տեղեկատու»-ի ներկայ թիւին հետ
կը բաժնուի «Սպիտակի Երկրաշար-
ժը, Եգիպտոսի ՀԲԸՍ-ը և Եգիպ-
տահայ Համայնքը» խորագիրը կրող
առանձին գորոյկ-յաւելուածը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԲԸՍ-ի Նախագահ Պերճ Սեղրակեանի Ամանորի Ողջոյնը	1
ՀԲԸՍ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Նոր Կազմը	3
ՀՀ Ղետպան Արմեն Մելքոնեանի Հանդիպումը Գահիրէն Նահանգապետին Հետ	4
Արեւմտահայերէնի վերածեց՝ Ծաբէ Մարգարեան	
ՀՀ Ղետպան Արմեն Մելքոնեանի Հանդիպումը Եգիպտոսի Հաղորդակցութեան Եւ Տեղեկատուական Արհետագիտութիւններու Նախարարին Հետ	4
Արեւմտահայերէնի վերածեց՝ Ծաբէ Մարգարեան	
Հելիոպոլսոյ ՀՄԸԸ ՆՈՒՊԱՐԻ Ֆութպոլի Դաշտին Բացումը	5
Սոյի Ներեսեան-Յակորեան	
Յիշատակի Յանկ ՀՄԸԸ ՆՈՒՊԱՐԻ Ֆութպոլի Դաշտին Բացումին Առիթով	10
«Արեւ»ի Արաբերէն Ամսօրեայ Յաւելուածը	11
«Տ»	
Գահիրէն ՀԲԸՍ-ը Կը Պարգևատրէ 2012-2013 Տարեշրջանի Գերազանցիկ Ուսանողները	12
Գահիրէն ՀԲԸՍ-ի կայքէջն քաղեց՝ Անայիս ճիզմէճեան	
Եգիպտահայ Երիտասարդները Կը Խանդավառեն ՀԳՄ-ի Յունուար 6-ի Աւանդական Փառատօնը	14
Արփի Խաչերեան	
Կաղանդ Պապային Այցը Գահիրէն ՀԲԸՍ-ի «Ծիածան» Մանկական Երգչախումբին	16
Գահիրէն ՀԲԸՍ-ի կայքէջն քաղեց՝ Անայիս ճիզմէճեան	
Լոյս Տեսան Գահիրէն ՀԲԸՍ-ի 2014 Թուականի Օրացոյցները	16
Աշակերտական Փորձէր - Սպիտակի Երկրաշարժին 25-Ամեակը	17
Սեւակ Սագայեան	
Աշակերտական Փորձէր - Ամանորեայ Մտորումներ	18
Լուսածին Ղազէլեան	
Մտերմիկ Օր Մը	19
Սիլվա Պաթանի	
Մտերմութեան Օր Մը	20
Լորիկ Տրդատեան	
Մահ Եւ Յուղարկաւորութիւն Ժիրայր Տրդատեանի	21
Հելիոպոլսոյ ՀՄԸԸ ՆՈՒՊԱՐԻ Կաղանդի Պազարը	22
Սոյի Ներեսեան-Յակորեան	
Հելիոպոլսոյ ՀՄԸԸ ՆՈՒՊԱՐԻ Խթման Տօնակատարութիւնը	23
Սոյի Ներեսեան-Յակորեան	
Հելիոպոլսոյ ՀՄԸԸ ՆՈՒՊԱՐԻ «Մարգական Օր»ը	24
Սոյի Ներեսեան-Յակորեան	
Անդամական	



ՀՅԱՆԴԻ ՆԱԽԱԳԱՀԿ ՊԵՐՃ ՍԵԴՐԱՎԿԵԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ՈՂՋՈՅՆՔ

Նոր Տարուան նախօրեակին, ժամանակի յառաջընթացը աւելի շեշտուած կերպով կ'իշխէ մեր մտածումներուն վրայ, մղելով մեզ ինքնաքննութեան եւ մեր յանձնառութիւններուն վերահաստումին: Այս առիթով մենք գոհունակութեամբ կը նշենք անցնող տարուան մեր ծաւալուն իրագործումները, որոնց շարքին յատկապէս անսախընթաց տարողութեամբ համալսարանական կրթաթոշակներու յատկացումները, նաեւ աշխարհատարած մեր շրջանակներուն համար իիմնական դարձած շարք մը ծրագիրներու յոբելենական տարեդարձներուն նշումը եւ բազմաբնոյթ աշխատանքը: Միաժամանակ, մեր ուշադրութիւնը կը կերպուանայ մեր դիմաց ցցուած մարտահրաւերներուն վրայ՝ զանոնք դիմագրաւելու վերանորոգ վճռակամութեամբ:

Նախ իմ գնահատանքս եւ շնորհակալութիւններս կը փափաքիմ յայտնել մեր շրջանակներուն, մասնաճիւղերուն, դպրոցներուն, Երիտասարդ Վրիեստավարժներուն եւ տարբեր յանձնախումբերուն Յայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան առաքելութեան նկատմամբ իրենց ցուցաբերած նուիրումին եւ աշխոյժ գործունեութեան համար:

Նոր Տարին կը դիմաւորենք մտահոգիչ իրադարձութիւններով յոի աշխարհի մը մեց: Տնտեսական եւ քաղաքական տագնապներ, ինչպէս նաեւ շրջանային հակամարտութիւններ արհաւիրքի մատնած են միլիոնաւոր մարդիկ, որոնք ֆիզիքական գոյութեան եւ ապրուստի համար առօրեայ ճգնաժամ կ'ապրին՝ ենթակայ պատերազմական վայրագութիւններու: Միաժամանակ, ճարտարագիտական փայլուն իրագործումներ եւ համագործակցական նորարարութիւններ, կը շարունակեն կայուն եւ բարեկարգ կեանքի կարելիութիւններ ստեղծել մարդկութեան համար: Յաղորդակցութեան եւ լրատուութեան արդի միջոցառումները շեշտակիօրէն հաղորդակից կը պահեն մեզ համաշխարհայնական այս իրականութիւններուն:

Որպէս մեր ժողովուրդի ծառայութեան նուիրուած կազմակերպութիւն, որ մաս կը կազմէ այս ոլորտին, մենք կը դիմագրաւենք ծանրակշիր պատասխանատուութիւններ եւ պարտականութիւններ, որոնց համար մեր միջոցները եւ կարելիութիւնները անբաւահար են: Անհրաժեշտ է որ համադրենք մեր ուժերը, որպէսզի հաս-



տատակամ ու գործնապաշտ մօտեցումով հասնինք անոնց, որոնք առաւելագոյն կարիքը ուսին օգնութեան, նաեւ յաջողինք ինքնութեան գիտակցութիւն եւ հպարտութիւն ներշնչել մեր երիտասարդ սերունդին աշխարհի տարածքին:

Այս ոգիով, մինչ կը պատրաստուինք Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօնախմբութիւններուն, կոչ կ'ուղղեմ բոլորիդ, շարունակ ձեր մտքերուն մեջ ունենալու այն բազմահազար սուրիահայերը, որոնք կը շարունակեն առօրեայ գոյապայքար մղել տակաւ սաստկացող զինեալ հակամարտութիւններու արհաւիրքին մեջ:

Անհրաժեշտ կը նկատեմ շեշտել, որ մեր ազգակիցներուն օժանդակելու առաջնահերթութիւնը գերադաս պետք է սեաել մեր շրջանակներու աւանդական ծրագիրներուն եւ գործունեութիւններուն: Անհրաժեշտ է որ միացեալ եւ հետեւողական ճիգերով բաւարար նիւթական միջոցներ գոյացնենք, որպեսզի շարունակենք սուրիահայերու օգնութեան մեր յանձնառութիւնը, միաժամանակ պահպանելով մեր կառոյցներու եւ ծրագիրներու գործունեութիւնը Սփիտքի եւ Հայաստանի մեջ:

Ի վերջոյ, կը փափաքիմ ողջունել մեր տաղանդաւոր երիտասարդներ՝ արհեստավարժներ, կատարող արուեստագետներ, խոստմնալից համալսարանականներ, մաղթելով որ անոնք հասնին իրենց ձգտումներուն եւ կը հրաւիրեմ գիրենք Սփիտքի եւ հայրենիքի մեջ միացեալ ուժերով եւ յանդուգն ու անկաշկանդ ոգիով դիմագրաւելու մեր համայնական մարտահրաւերները:

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, կ'ողջունեմ Հայկական Բարեգործական Ընդհանուր Սիութեան մեր համայն անդամները, բարերարները, նուիրատունները եւ բարեկամները, մաղթելով որ Նոր Տարին ըլլայ խաղաղ, յաջող ու բարեբեր բոլորին, առլցուն առողջութեամբ եւ երջանկութեամբ:

Պերճ Սեդրակեան
Նախագահ

30 Դեկտեմբեր 2013



ՀԱՌՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄ-Ի ԵԳԻՊՏՈՍԻ ՃՐՁԱՆԱԿԱՎԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Այսու հաճոյքով կը տեղեկացնեմ, թէ ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովը, Յանձնաժողովիս կազմը համալրելու համար երեք նոր անդամներ նշանակած է յանձինս՝ Տեարք Ժիրայր Տեփոյեանի, Ռուբեն Թերզիապաշեանի եւ Լեւոն Նիկոլեանի:

Այս առիթով Յանձնաժողովիս դիւանը վերակազմուած է հետեւեալ ձեռով՝

Պերճ	Թերզեան	Ատենապետ
Օնսիկ	Կարիպեան	Ա. Փոխ Ատենապետ
Վիգեն	Ճիզմէնեան	Բ. Փոխ Ատենապետ
Տիկին Կասիա	Ճղալեան	Ատենադպիր
Օնսիկ	Պըլըքտանեան	Գանձապահ
Ռուբեն	Թերզիապաշեան	Փոխ Գանձապահ
Գեորգ	Երզնկացեան	Խորհրդական
Լեւոն	Նիկոլեան	Խորհրդական
Ժիրայր	Տեփոյեան	Խորհրդական

ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողով

10 Նոյեմբեր 2013



ՀՀ ԴԵՍՊԱՆ ԱՐՄԵՆ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԳԱՀԻՐԷՒ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ՀԵՏ

18 Դեկտեմբեր 2013-ին, ՀՀ Եգիպտոսի դեսպան Տոքթ. Արմեն Մելքոնեան հանդիպում մը ունեցաւ Գահիրէի նորանշանակ Նահանգապետ Կալալ Մուսթաֆա Սահտի հետ:

Չրոյցի ընթացքին մտքեր փոխանակուե-



ցան հայ-Եգիպտական երկկողմ յարաբերութիւնները խորացնելու հնարաւորութիւններուն մասին եւ ընդգծուեցաւ տարբեր ոլորտներէ ներս Երեւանի եւ Գահիրէի միջեւ անմիջական շփումներու կարեւորութիւնը:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուեցաւ նաեւ հայ-Եգիպտական պատմամշակութային կապերուն, Եգիպտոսի եւ, մասնաւորապես, Գահիրէի մշակութային եւ հասարակական կեանքին մէջ Եգիպտահայ համայնքին ունեցած կարեւոր ներդրումին:

Դեսպան Մելքոնեան Նահանգապետին տեղեկութիւններ հաղորդեց Հայաստանի տնտեսական ներուժին եւ ներդրումային հնարաւորութիւններուն մասին:

Արեւմտահայերէնի վերածեց՝
Շաքէ Մարգարեան

ԴԵՍՊԱՆ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐԵԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՈՒԹՎԱՆ ԱՐԿԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

20 Յունուար 2014-ին, ՀՀ Եգիպտոսի դեսպան Տոքթ. Արմեն Մելքոնեան հանդիպում մը ունեցաւ Եգիպտոսի հաղորդակցութեան եւ տեղեկատուական արհեստագիտութիւններու նախարար Աթէֆ Զելմիի հետ:

Ջնևարկուեցան Երկու Երկիրներու միջեւ տեղեկատուական արհեստագիտութիւններու ոլորտէն ներս համագործակցութիւն ծառալելու հնարաւորութիւնները: Որոշուեցաւ համատեղ ուսումնասիրութիւններ կատարել համագործակցութեան առաւել խոստմասլից ուղղութիւններ ի յայտ բերելու նպատակով:

Դեսպան Արմեն Մելքոնեան Նախարարին տեղեկութիւններ փոխանցեց քըննարկուող ոլորտին մէջ Հայաստանի ունե-



ցած ներուժին եւ վերջին տարիներուն արձանագրած յառաջընթացին մասին:

Արեւմտահայերէնի վերածեց՝
Շաքէ Մարգարեան

ՀԵՂԻՈՂՈԼՍՈՅ ՀՄԵՌ ՆՈՒՊԱՐԻ ՖՈՒԹ-ՊՈԼԻ ԴԱՇՏԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Ծաբաթ, 9 Նոյեմբեր 2013-ին, բացումը կատարուեցաւ Յեղիպոլսոյ ՀՄԸ ՆՈՒՊԱՐԻ ֆութպոլի վերանորոգուած դաշտին, հովանաւորութեամբ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մսացականեանի՝ Բարեխնամ Առաջնորդ Եգիպտահայոց եւ Նախագահութեամբ Տէր եւ Տիկին Պերճ Թէրզեանի՝ Ատենապետ ՀԲԸ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի եւ Պատույ Ատենապետ ՀԲԸ-ի Գահիրէի Մասնաճիւղին:

Օրուան Պատույ իիւր, ՀՀ Եգիպտոսի Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Տոքթ. Եւ Տիկին Արմեն Մելքոնեան, Նաեւ Գերապայծառ Գրիգոր Օգոստինոս Գուսան՝ Վիճակաւոր Եգիպտոսի Քայ Կաթողիկէ Համայնքին, իրենց Ներկայութեամբ պատուեցին բացման արարողութիւնը:

Երեկոյեան 7-ին սկսեալ ՀՄԸ ՆՈՒՊԱՐԻ մեծ թիւով անդամներ, համակիրներ, տարբեր ակումբներէ իիւրեր ու մամուլի ներկայացուցիչներ հետզհետէ մուտք կը գործէին մարզակումբէն ներս, ուր դալարագեղ մարգագետինը մութի-լոյսի խաղերով ու հնոհոն ցորուած սեղան-աթոռներով բոլորովին կերպարանափոխուած ու բարձրաճաշակ տեսք ստացած էր, մինչ ֆութպոլի դաշտը տակաւին ամբողջովին խաւարի մէջ կը մնար:

Օրուան յայտագիրը կը պարփակէր հովանաւոր եւ նուիրատու կնքահայրերուն երկար ցանկը, Յեղիպոլսոյ ՀՄԸ ՆՈՒՊԱՐԻ Վարչութեան անդամներուն անունները ու ֆութպոլի դաշտին լուսանկարները:

Մինչ Վարչական անդամները կը դիմաւուին իիւրերը եւ կ'առաջնորդէին զանոնը դէպի սեղանները, Տիկնաց Յանձնախումբի անդամուիկները կը ստուգէին որ քոքթէյլ իիւրասիրութեան բոլոր ուտելիքներն ու ըմբելիները գետեղուած ըլլային սեղաններուն վրայ ու մատուցողները պատրաստ՝ հրամցնելու համադամները:

Օրուան խորհուրդնեւ Ներշնչուած, տիկին Զապէլ Տեփոյեան, ծաղիկներու ու փոքրիկ ֆութպոլի գնդակներու ճաշակաւոր յարդարանքով ծաղկեկողովներ պատրաս-

տած էր, որ պատույ տեղ գրաւած էին բոլոր սեղաններուն մէջտեղը:

Ժամը 8-ին, ակումբին ատենապետ Տիկ Ժիրայր Տեփոյեան հրաւիրեց Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մսացականեանը, ՀՀ Լիազօր Դեսպան Տոքթ. Արմեն Մելքոնեանը, օրուան Նախագահ Պր. Պերճ Թէրզեանը եւ Գերապայծառ Գրիգոր Օգոստինոս Գուսանը, որպէսզի կնքահայրերուն յանձննեն մէտալները, որոնք սիրայօժար կերպով նուիրուած էին «ԵթալԵթ» հաստատութեան կողմէ:

Տասներկու հովանաւոր կնքահայրեր ու քսանինը նուիրատու կնքահայրեր պարգեւատրուեցան գեղեցիկ մէտալներով ու տեղ գրաւեցին ամպիոնին վրայ՝ ակումբին Վարչականներուն հետ լուսանկարուելու:

Ապա մէջտեղ բերուեցաւ տօնակատարութեան՝ ֆութպոլի դաշտի ձեւով շինուած կարկանդակը, զոր ներկայ հոգեւոր պետերը, դեսպանը եւ ատենապետները միանաբար կտրեցին զայս:



Յանկարծ մարգագետինին լուսավառութիւնը մեղմացաւ ու խանդավառ երաժշտութեան ընկերակցութեամբ ֆութպոլի դաշտը ողողուեցաւ լոյսերով, հիացում պատճառելով բոլորին:

Վերջապէս, վեց ամիս աշխատանքէ ետք, ակումբին փոշեծածկ ու անխնամ ֆութպոլի դաշտը վերանորոգուած՝ արդիական ամենաբարձր մակարդակի դաշտի մը վերածուած էր:



* * *

Կը յիշեմ այդ տարածութիւնը 60-ական թուականներուն, որուն մեկ մասին վրայ սկառատները, իրենց իսկ աշխատանքով, արմաւենիսներու կոճղերով ու ճիւղերով փոքրիկ, կոկիկ խցիկ մը շինած էին: Աւելի ուշ, անոր քով տեղ գրաւեց քարաշեն նեղ, երկար, միայարկանի շինութիւն մը, որ կը գործածուեր որպէս սրահ սկառատներու ու գայլիկներու տարեկան ներկայացումներուն ժամանակ:

Յու-հոն հինաւորց ծառեր մագլցելու սրանչելի պատեհութիւն կ'ընծայեին չարաճի փոքրիկներուն: Խցիկին դիմացի կողմը մարմնամարզութեան սիրահարներ երկաթ վերցնելու մարզանքներ ընելու վայր մը պատրաստած էին հարկ եղած սարքերով: Իսկ տարածքին պասքեթ պոլի դաշտին կից մասցեալ մասը կը գործածուեր որպէս վոլի պոլի դաշտ:

Յակառակ որ ՅՄԸՍ ՆՈՒՊԱՐԸ ֆութապոլի խումբ ուներ, սակայն փորձերը ուրիշ ակումբներու կամ դպրոցներու մեջ կ'ըլլային:

Տարիներու ընթացքին, արտագաղթի պատճառով, մարզիկներու ու անձնազոհ պատասխանատուներու թիւը նուազելով, այլեւս մարմնամարզութիւն ընող, վոլի պոլի խաղացող, սկառատութեամբ զբաղող չը-մնաց: Միայն պասքեթ պոլն է, որ գոյատեւց:

Փայտէ անուշիկ խցիկը փլցուեցաւ, քանի որ այլեւս անգործածելի էր: Վոլի պոլի բգիկ-բգիկ եղած ցանցը, այդպէս ալ մնաց

երկա՞ր ժամանակ: Միայն ցանկապատին եզերքի ծառերն ու քարաշեն միայարկանի շինութիւնը կանգուն մնացին քանի մը տարի եւս:

80-ական թուականներուն վերջերը սկառատութիւնը վերակենդանացնելու փորձեր եղան: Ուստի, այդ լքուած տարածութիւնը գործածելի դարձնելու համար, վայրի բոյսերն ու ծառերը կտրուեցան ու քարաշեն սրահը սկառատական խցիկի վերածուեցաւ: Յոկտեմբեր 1992-ի երկրաշարժին պատճառով, այս խցիկն ալ փլաւ ու անոր աւերակները քանի մը ամիս տակալին կը յուշեին սկառատութեան աւարտը ակումբներուն:

90-ական թուականներու վերջաւորութեան, ֆութապոլի կարգ մը երիտասարդ սիրահարներ, անձնական ճիգերով այս խոպան տարածութիւնը վեց հոգինց համեստ ֆութապոլի դաշտի մը վերածեցին, մեծ խանդավառութիւն ստեղծելով ակումբներուն: Երիտասարդներ ու պատանիներ, որոնք պասքեթ պոլի հանդեպ սէր չունենալով գրկուած էին մարզուելէ, միացան ֆութապոլի խումբին: Մարզիչ մը նշանակուեցաւ ու ՅՄԸՍ ՆՈՒՊԱՐԸ ֆութապոլի խումբը սկսաւ մասնակցիլ Յելիհոպոլսոյ փոքր ակումբներու միջեւ կազմակերպուող մըրցաշարքերուն:

Տրուած ըլլալով որ դաշտը մարզածկ էր, ուստի յարատեւ խնամքի ու ծախսի կը կարօտէր զայն կանանչ պահելու համար: Յաճախ անխնամ կը մնար ու աւազն ու փոշին կը ծածկէին նորածիլ մարգերը:

* * *

Յունիսեմբեր 2012-ին կազմուած ՀՄԸՆ ՇՈՒՊԱՐԻ Վարչութեան առաջադրութիւններէն էր ամենաբարձր մակարդակի ֆութապոլի դաշտ ունենալը: Այս տեսակ ծրագիր մը մշակելը ինքնին յանդկնութիւն էր՝ նկատի ունենալով Երկրին անապահով կացութիւնը ու եգիպտահայ գաղութիւն անորոշ ճակատագիրը: Սակայն, ՀՄԸՆ ՇՈՒՊԱՐԻ Վարչութիւնը, անտեսելով այս բոլոր ժամանակաւոր դժուարութիւնները, կը գործէր ապագային համար, որ անկասկած փայլուն պիտի ըլլայ:

Անշուշտ այս մեծածախս ծրագիրը անկարելի պիտի ըլլար իրականացնել, եթէ չըլլար Գահիրեի ՀԲԸՆ-ի անսակարկ օժանդակութիւնը:

Վարչութեան երազը իրականացած էր: Հանդիսատեսները կանոնաւոր կերպով գրաւած էին իրենց տեղերը ֆութապոլի դաշտին եզերքի ամպիոնին վրայ ու օրուան նախագահը՝ Պր. Ռեզ Թերզեան, Առաջնորդ Գրշի. Սիրազան Հայր Աշոտ Եպս. Մացականեան, Գերապայծառ Գրիգոր Օգոստինոս Գուսան եւ ակումբին ատենապետ Պր. Ժիրայր Տեփոյեան, 280 անձերու ներկայութեան բացման ժապաւելու կը կտրէին, երաժշտութեան եւ լոյսերու տպաւորիչ խաղերու ընկերակցութեամբ: Պր. Թերզեանի կողմէ գնդակի առաջին արձակումով դաշտը բացուած հռչակուեցաւ:



Պր. Ժիրայր Տեփոյեան խօսք առնելով, առաջին արձիթով շնորհակալութիւն յայտնեց օրուան կը սահայրերուն, որոնք իրենց նիւթական օժանդակութեամբ նեցուկ կանգնած էին այս մեծ ծրագրին: Ան յա-

տուկ շնորհակալութիւն յայտնեց Գահիրեի ՀԲԸՆ-ին, որուն առատածեռն մասնակցութեամբ կարելի եղած էր իրագործել այդքան բարձր մակարդակի ֆութապոլի դաշտ մը:



Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ ակումբին վարչական անդամներուն եւ մասնաւանդ Տիկնաց Յանձնախումբին, որուց անձնազնի աշխատանքին շնորհիւ կարելի եղած էր այդպիսի յաջող երեկոյ մը կազմակերպել: Ան մաղթեց որ այս գեղեցիկ դաշտին մեջ հաւաքուին գաղութիւն բոլոր ֆութապոլի սիրահարները:





Ապա խօսք առաւ օրուան նախագահ Պր. Թերզ Թերզեան եւ շնորհաւորեց ՀՍԸՆ ՆՈՒՊԱՐԻ Վարչութիւնը իր տարած աշխատանքին համար, նաեւ շեշտեց անհրաժեշտութիւնը բարերարներուն, որոնց նուիրատութիւններուն շնորհիւ կարելի կ'ըլլար իրագործել հարկ եղած ծրագիրները: Անյատկապէս յիշեց ՀԲԸՆի մեծ բարերարուիի Սաթենիկ Չագըրը, որուն նուիրատութեան շնորհիւ տարիներէ ի վեր գաղութիւն մեջ զանազան ծրագիրներ կարելի կ'ըլլայ իրականացնել:



Կնքահայրերու ցանկին անդրադառնալով, Պր. Թերզեան գոհունակութեամբ արտայայտուեցաւ Երիտասարդներուն մասին, որոնց անունները տեղ գրաւած եին երեց կնքահայրերուն կողքին:

Ապա հնչեց հայկական պարեղանակը եւ պարուսոյց Սիրան Յակոբեան-Գարգուրի ղեկավարած «Զանգեզուր» պարախումբին տղաքն ու աղջիկներու մուտք գործեցին ու պարի քայլերով դաշտին բացումը կատարեցին:



Յետոյ խօսք առաւ ֆութապոլի վեթերան մարզիկ Տոքթ. ճորճ Սիմոնեան ու Յելինպոլսոյ ՀՍԸՆ ՆՈՒՊԱՐԻ «ֆութապոլ»ին պատմականը ըրաւ՝ հիմնուելեն մինչեւ այսօր:



Ֆութապոլի դաշտեւ դուրս, պասըթե պոլի դաշտին եգերքը, դեղինով կապոյտ համազգեստներ հագած ակումբին փոքրիկներն ու պատանիները անհամբեր կը սպասէին դաշտ իշնելու ազդանշանին ու իրենց խաղով դաշտին իսկական բացումը կատարելու:

Յինգեն տասնինգ տարեկան քսան մարզիկներ, երկու խումբի բաժնուած, առաջնորդութեամբ տարիներու նուիրեալ մարզիչ Ջաբթէն Տօրոհի, մտան դաշտ: Սկիզբը երկու խումբերը միայն վեցական փոքրիկներէ կազմուած եին, որոնք մեծ խաղացողներու հովեր առած իրենք զիրենք կը գերազանցէին ու շատ ինքնավստահ խաղարկութիւն կը ցուցաբերէին:



Շուտով փոքրիկները փոխարինուեցան պատանիներով, որոնք նոյնքան յաջող էին եւ լաւ ապագայ կը խոստանան:



Կրկին հնչեց հայկական մեղեդին: Այս անգամ «Նազ Պար»ով Բերլա Ալանեան ելոյթ ունեցաւ, գեղեցիկ մենապարով մը:

Երեց տղոց խումբերը պատրաստ էին մրցելու եւ ֆութապուլի դաշտը բացուած յայտարարելու: Երիտասարդներուն կողքին կ'երեւեին վեթերաններ, որոնք տարիներ շարունակ իին դաշտին վրայ խաղալէ ետք



Կրնային գնահատել այս հոյակապ դաշտը:

Վարձը կատար բոլոր անոնց, որոնք այս յանդուգն քայլը առին՝ ՀՄԸՆ ՆՈՒՊԱՐԸ բարձրորակ ու արդիական ֆութապուլի դաշտով մը օժտելով:

Վարձը կատար Գահիրեի ՀԲԸՆ-ի Վարչութեան, որուն նիւթական եւ բարոյական աջակցութեան շնորհիւ ՀՄԸՆ ՆՈՒՊԱՐԸ կրնայ մշակել ու գործադրել մեծածաւալ ծրագիրներ եւ իրականացնել իր առաքելութիւնը՝ «Հայապահպանում մարզականի միջոցով»:

Սոսի Ներեստեան-Յակոբեան



ՅԻՇԱՏԱԿԻ ՑԱՆԿ ՀՄԼՄ ՆՈՒՊԱՐԻ ՖՈՒԹ-ՊՈԼԻ ԴԱՇՏԻՆ ԲԱՑՈՒՄԻՆ ԱՌԻԹ-ՌՎ

ՀՈՎԱՆԱՒՐ ԿՆԵՎԱՅՐԵՐ


Տեր եւ Տիկին	Պերճ	Թէրգեան
Տեր եւ Տիկին	Նուպար	Սիմոնեան
Տեր եւ Տիկին	Օնսիկ	Պըլքտանեան
Տեր եւ Տիկին	Յրաչ	Սիմոնեան
Տոքթ. եւ Տիկին	Վիգեն	Ճիզմենեան
Տեր եւ Տիկին	Ժիրայր	Տեփոյեան
Տեր եւ Տիկին	Վարդ	Ալեքսանեան
Տեր եւ Տիկին	Ոխըռտ	Բարմաքեան
Տոքթ. եւ Տիկին	Գեղրդ	Երզնկացեան
Տեարք եւ Տիկնայք	Պերճ եւ	Կարեն Թուլումպանեան
Տեր եւ Տիկին	Ժիրայր	Յակոբեան
Տեր եւ Տիկին	Լեւոն	Նիկոլեան
Տեր եւ Տիկին	Կարօ	Վարժապետեան

ՆՈՒԻՐԱՏՈՒ ԿՆԵՎԱՅՐԵՐ

Տոքթ. եւ Տիկին	Կարօ	Աբգարեան
Տեր եւ Տիկին	Գրիգոր	Աբիկեան
Տեր եւ Տիկին	Յակոբ	Աբիկեան
Տեր եւ Տիկին	Գեղրդ	Աւանեան
Տեր եւ Տիկին	Պերճ	Աւետիսեան
Տեր եւ Տիկին	Խորեն	Գալընեան
Տիար	Յրազդան	Գալընեան
Տեր եւ Տիկին	Յակոբ	Գարակէօգեան
Տիար	Կարպիս	Եազընեան
Տեր եւ Տիկին	Ոռպէր	Թաշճեան
Տիար	Գեղամ	Թերզիպաշեան
Տեր եւ Տիկին	Ոռլեն	Թերզիպաշեան
Տեր եւ Տիկին	Օնսիկ	Կարիպեան
Տեր եւ Տիկին	Եանսի	Կրէկորիու
Տեր եւ Տիկին	Յրայր	Ճղալեան
Տեր եւ Տիկին	ճօ	Նիկոլեան
Տիար	Մարտիրոս	Պալայեան
Տեր եւ Տիկին	Արմեն	Պալթայեան
Տեր եւ Տիկին	Ալեն	Սագայեան
Տոքթ. եւ Տիկին	Ժորժ	Սիմոնեան
Տեր եւ Տիկին	Ոռլեն	Սիմոնեան
Տեր եւ Տիկին	Զրիս	Սիմոնեան
Տեր եւ Տիկին	Յրաչ	Սվաճիպաշեան
Տիար	Սիմոն	Տեփոյեան
Տեր եւ Տիկին	Նորայր	Տօվլէթեան
Տիար	Ժիրայր	Տրդատեան
Տոքթ. եւ Տիկին	Յրայր	Տրդատեան
Տեր եւ Տիկին	Արմեն	Վարժապետեան
Տեր եւ Տիկին	Վահե	Վարժապետեան



«ԱՐԵՒ»Ի ԱՐԱԲԵՐԸՆ ԱՄՍՈՐԵԱՅ ՅԱՏԵԼՈՒԹԾՈՂ



Եգիպտահայ մտաւորական Պերճ Թէրզեանի հեղինակութեամբ եւ հրատարակութեամբ Յունուար 2014-ին լոյս տեսաւ վերոնշեալ խորագրով գիրքը (132 էջ, 17x24 սմ.):

Գիրքը պատմութիւնն է «Արեւ»ի արաբալեզու յաւելուածին անցած շուրջ 11-ամեայ ուղիին (1998-2009):

Առաջարանը գրած է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմագիտութեան Դոկտոր-Պրոֆեսոր Ալբերտ Խառատեան, որ ծանօթ է հայ պարբերական մամուլի մասին իր գրած խորահմուտ բազմաթիւ ուսումնասիրութիւններով:

Հիմնականին մեջ գիրքը կը բաղկանայ իրերայաջորդ հետեւեալ չորս գլուխներէն՝ Մուտք, Ծագում, Ճառագայթում եւ Շիշում, անկախաբար Յաւելուածի ծաւալուն բաժինն մը, որուն մեջ տեղ գտած նիւթերը, ըստ հեղինակին «կրնան սատարել ներկայացուած հարցերուն առաւել ճիշդ եւ յստակ ընկալումին»:

Հեղինակը գիրքին մեջ կը նշէ նաեւ, թէ «Ներկայ տեղեկագրութիւնը... կը նպատակադրէ հայ մամուլի պատմութեամբ հետաքրքրուողներուն գաղափար մը տալ Եգիպտահայ մամուլի տարեգրութեան մեջ Եզակի համարուղ այս պարբերականին մասին, ուրուագծելով անոր անցած աւելի քան 11-ամեայ ուղիին, փորձելով ներկայացնել անոր առաջադրութիւնները, արեւելումը, բովանդակութիւնը, դիմակալած դժուարութիւնները եւ անոր մասին յայտնուած կարգ մը օտարներու եւ հայերու մասնագիտական կարծիքները»:

Բազմաթիւ մանրամասնութիւններով եւ ծանօթագրութիւններով հարուստ այս գիրքը հետաքրքրութեամբ կը կարդացուի:

Կը շնորհաւորենք հեղինակը իր այս նոր գրքին համար եւ կը մաղթենք իրեն նորանոր իրագործումներ:

«Տ»



ԳԱՀԻՐԵՒ ՀՔԸՄ-Ը ԿԲ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ 2012-2013 ՏԱՐԵՇՔԱՆԻ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ՈՒՍՏՈՂՆԵՐԸ

Չորեքշաբթի, 11 Դեկտեմբեր 2013-ին, Գահիրելի ՀԲԸՄ-ը վկայագրերով եւ նուերներով պարգեւատրեց Գահիրելի հայ համայնքի այն ուսանողները, որոնք փայլուն արդիւնքներով աւարտած են 2012-2013 ուսումնական տարեշշանը: Պարգեւատրուման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Գահիրելի ՀԲԸՄ-ի Հելիոպոլսոյ «Չագըր Մշակութային Կեդրոն»ին մէջ:

Մրցանակները 2001 թուականին ի վեր, որպէս գնահատանք եւ քաջալերանք, կը տրուին համայնքիս գերազանցիկ ուսանողներուն, շնորհի Գահիրելի ՀԲԸՄ-ի «Սաթենիկ Չագըր Ֆոնտ»ին:

Այս տարի պարգեւատրուեցան 12 ուսանողներ:

Վեցերորդ նախակրթարանին չորս հոգի՝
Ոիթա Սիմոն Չամբերթենեան 96.31%
Մարի Մանուէլ Գրիգորեան 95.65%
Նաթալի Գեորգ Կոտոլոշեան 94.85%
Լիլիթ Յակոբ Սայեան 93.32%

Պատրաստական բաժնեն երեք հոգի՝
Տանիել Նակի Գալլալեան 92.60%
Մանե Վիգեն Ճիզմենեան 91.60%
Ճուլիա Գեորգ Աւանեան 91.25%

Երկրորդականին չորս հոգի՝
Մելիսա Նուրիհան Ջիլրճեան 98.31%
Ասիմ Վիգեն Ճիզմենեան 94.00%
Յակոբ Պերճ Ավալանեան 92.70%
Զրիս Արման Գրլյուկեան 91.90%:

Համալսարանաւարտ մէկ հոգի միայն՝ Զրիս Յրայր Շահրոգեան, աւարտած է ճարտարագիտական ճիւղը՝ «Ճատ լաւ» արդիւնքով:

Նախքան մրցանակաբաշխութիւնը սկսիլը, որ կատարուեցաւ Գահիրելի ՀԲԸՄ-ի Վարչութեան անդամներուն կողմէ, խօսք առաւ Գահիրելի ՀԲԸՄ-ի ատենապետ՝ Տոքթ. Վիգեն Ճիզմենեան:



Աև շնորհաւորեց բոլոր շրջանաւարտները եւ ապա քաջալերական խօսքեր ուղղելով, նորանոր յաջողութիւններ մաղթեց անոնց:

Հանդիսութեան վերջաւորութեան Հայաստանի մասին կարճ ժապաւեն մը ցուցադրուեցալ:

Գնահատական գիրերու կողքին, ըստ իրենց ստացած վկայականին, շրջանաւարտները հետեւեալ նուերները ստացան.

Նախակրթարանի աշակերտներ՝ 100 Ե.Ո. եւ «Կրօնի եւ Եկեղեցւոյ Մասին» հատորը:

Պատրաստականի աշակերտներ՝ 200 Ե.Ո. եւ «Արաբերէն Յօդուածներ եւ Գրութիւններ Հայոց Եղեռնին Մասին» հատորը:

Երկրորդականի աշակերտներ՝ 500 Ե.Ո. եւ «Սարուխան» հատորը:

Համալսարանաւարտ «Ճատ լաւ» յիշատակութեամբ ուսանողը՝ 800 Ե.Ո. եւ «Հայկական Հարցը» հատորը:

Հետագային տեղի պիտի ունենայ նաեւ Աղեքսանդրիոյ գերազանցիկ աշակերտներու պարգեւատրումը:

**ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝
Անայիս Ճիզմենեան**





ԵԳԻՊՏԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԿԲ ԽԱՆԴԱՎԱՌԵՆ ՀԳՄ-Ի ՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԻ 6-Ի ԱՐԵՆԴԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆՔ

Ամեն տարուայ նման, այս տարի եւս Յայ Գեղարուեստասիրաց Միութիւնը կազմակերպեց Երիտասարդական Փառատօնը Յունուար 6-ին՝ գործակցելով ՀԱՅ Կոկանեան Սրահին հետ:

Փառատօնին ելոյթ ունեցան Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանի աշակերտներ եւ միութիւններու Երիտասարդաց յանձնախումբերու Ներկայացուցիչներ:

Օրուան հանդիսութիւնը կը վայելէր նախագահութիւնը գաղութիս սիրուած ազգայիններէն Տէր եւ Տիկին Գեղրդ եւ Մարլին Աւանեաններու:

Յանդէսին բացման խօսքը կատարեց Տիկ. Կասիա ճղալեան, քաջալերելով գաղութիս Երիտասարդները եւ Ներկայացնելով այս տարուան Փառատօնին ըսաբանը՝ յիշատակել մեր ազգի մեծութիւններուն յոբելեանները:

2013-ին նշեցինք հետեւեալներու յոբելեանները. Ուիլիըմ Սարոյեան եւ Վիկտոր Յամբարձումեան՝ ծննդեան 105-ամեակ, Արամ Խաչատուրեան՝ ծննդեան 110-ամեակ, Վահան Թեքեան, Չապէլ Եսայեան, Սիամանթօ եւ Ալեքսանդր Թամանեան՝ ծննդեան 135-ամեակ, Սիպիլ եւ Միհրան Տամատեան՝ ծննդեան 150-ամեակ, ինչպէս նաեւ Յովիաննես Թումաննեան՝ մահուան 90-ամեակ եւ Ռաֆֆի՝ մահուան 150-ամեակ:

Յայտագրի գեղարուեստական կատարումներուն ընթացքին, Ազգային Վարժարանի Երկրորդական կարգի աշակերտները մեջ ընդ մեջ համառօտ տեղեկութիւններ Ներկայացուցին հայ գրագետներու, բանաստեղծներու եւ ազգային գործիչներու մասին: Այդ տեղեկութիւնները պարունակող փոքրիկ գըրքոյն մը բաժնուեցաւ հանդիսատեսներուն:

Յանդէսը սկսաւ Պարոյր Սեւակի «Արի Նոր Տարի» բանաստեղծութեան ընթերցումով, որ կատարեց Ուուպինա Սաատ: Ուուրէն Սաատ ելոյթ ունեցաւ «All I want for Christmas is you» երգով: Սիւզի Սիրունեան կիթառի վրայ նուագեց եւ միաժամանակ Երկու երգ երգեց իր ստեղծագործութիւններէն: Իսկ Գալուստեան-Նուպարեան Ազգային

Վարժարանի Երգչախումբը ելոյթ ունեցաւ խմբավար Միհրան Ղազէլեանի ղեկավարութեամբ: Կոկանեան Սրահի պատանիները Ներկայացուցին Յովիաննես Թումաննեանի «Բարեկենդան»-ը՝ Տիկին Սաթօ Արգարեանի եւ Տիկին Լալա Շամամեան-Նիկոլեանի բեմադրութեամբ ու Տիկին Նանոր Արիկեանի Երաժշտական ընկերակցութեամբ:

Գլխաւոր դերերը կատարեցին Բերլա Աւանեան եւ Արեգ Արգարեան, իսկ Մեսրոպ Ղազէլեան կատարեց Բարեկենդանի դերը:

Երեկոյթին յայտնութիւնը եղաւ Եգիպտահայ գաղութիս Նորակազմ «ՅԱՅՅԱՍ» Երիտասարդական Նուազախումբը, որուն անդրանիկ ելոյթին յատկացուած էր Փառատօնին Երկրորդ մասը:

«ՅԱՅՅԱՍ» Նուազախումբը կազմուած է հետեւեալ Երաժիշտներէն. դաշնամուր եւ կիթառ՝ Արի Ազատ Գազանճեան, կիթառ՝ Վահան Թերզիպաշեան, հարուածային գործիքներ՝ Վարդան Թերզիպաշեան եւ Երգիչներ՝ Ուուրէն Սաատ, Լիւսի Սանճեան ու Յայաստաննես Յոհիկսիմէ Մուլատեան:

Խումբը հայկական սիրուած Երգերու փունչ մը իրամցուց, որուցմէ յիշատակութեան արժանի են «Կիլիկիա», «Ջիւն» եւ «Բարի Արագիլ» երգերը:

«ՅԱՅՅԱՍ»յի ելոյթը մեծապէս տպաւորեց բոլորը, որուք Երկար ծափահարութիւններով ողջունեցին Երիտասարդ կատարողները:

Փառատօնին վերջաւորութեան «Պահպանչ»ով եւ փակման խօսքով հանդէս եկաւ Եգիպտահայոց Առաջնորդ Գերշ. Տէր Աշոտ Եպիսկոպոս Սևացականեան: Սրբազն Յայրը շնորհաւորեց բոլորը Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներուն առթիւ, քաջալերական խօսքեր ուղղեց աշակերտներուն՝ յոբելեսական ընթերցումներուն համար, ողջունեց Երիտասարդ Երաժիշտներու ելոյթը եւ յարատեւութիւն մաղթեց Փառատօնի կազմակերպիչներուն:

Ընորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծննդն:

Արփի Խաչերեան





ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ ԱՅՅԸ ԳԱՎԻՐԵՒ ՀԲԸՄ-Ի «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳ-ՉԱՌՈՒՄՔԻՆ

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս Գահիրէի ՀԲԸՄ-ի «Ծիածան» մանկական երգչախումբին անդամները, իրենց շաբաթական փորձին ընթացքին՝ Շաբաթ, 28 Դեկտեմբերին, մեծ խանդավառութեամբ ընդունեցին Կաղանդ Պապային այցը: Ան, երգչախումբին հիմնադրութենեն ի վեր, ամեն տարի, անխափան կ'այցելէ անոս, մեծ ուրախութիւն պատճառելով բոլորին:

Խմբավար Միհրան Ղազելեան շրջապատւած օրուան հանդիսութիւնը կազմակերպող ՀԲԸՄ-ի Վարչութեան օժանդակ ասդամուիիներով՝ Տիկին Ռուպինա Ազանեան-Նորարեւեան, Տոք. Վրիփի Խաչերեան եւ Տոք. Անի Օհաննեսեան, մանկական երգչախումբի անդամներուն հետ միասնաբար, բոլորն ալ խանդավառ մթնոլորտի մը մեջ, դիմաւորեցին Կաղանդ Պապան:

Ապա, երբ Կաղանդ Պապան իր նուերները կը բաշխէր, փոքրերէն շատեր իրենց ակնարկը սեւեռած անոր դեմքին, կը շանա-



յին ստուար, ճերմակ մօրուքին ընդմեջին, գուշակել անոր իսկական ինքնութիւնը. Կաղանդ Պապա՞ եր թէ՞ Կաղանդ Սամա:

Ճնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծննդեան:

**ՀԲԸՄ-ի կայքէջն քաղեց՝
Անայիս ճիզմէճեան**

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԳԱՎԻՐԵՒ ՀԲԸՄ-Ի 2014 Թ-ՌԻԱԿԱՆԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Գահիրէի ՀԲԸՄ-ի Վարչութեան կողմէ լոյս տեսան 2014 թուականի պատի օրաթերթիկներով եւ գրպանի տօնացոյց օրացոյները:

Միութեան հայկական ասացուածքներ պարունակող պատի օրաթերթիկներով օրացոյցը, ինչպես նաեւ գրպանի տօնացոյց-օրացոյցը պատրաստուած են «Ոսկետառ» տպարանին կողմէ:

Իսկ օրաթերթիկներով օրացոյցին խաւաքարտին վրայի գունատիպ նկարը, որ կը ներկայացնէ Եգիպտահայ արուեստագետ Սիմոն Սամսոնեանի (1915-2003) «Ծաղիկներ Ծաղկամանին Մէջ» գեղանկարչական ստեղծագործութիւնը՝ նկարուած 1963-ին, իրականացուած է «Նուպար» տպագրատան կողմէ:





ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐՄԱՆՔԻՆ 25-ԱՄԵՍՎԸ

Այս տարի մենք նշեցինք Սպիտակի Երկրաշարժին 25-ամեակը. աւերիչ երկրաշարժ մը, որ հազարաւոր մարդոց կորուստին պատճառ դարձաւ:

Ես ուզեցի այս գրութեամբ յիշեցնել մեր գաղութին՝ մանաւանդ երիտասարդներուն, որ մենք՝ եգիպտահայերս ալ այդ դժուար օրերուն գևահատելի դեր ունեցանք մեր հայ ազգին օգնելու հարցին մէջ:

Չնայած ես այդ ժամանակ տակաւին ծնած չէի, սակայն մեծերու պատմածներէն եւ տարբեր յօդուածներէն տեղեկացած եմ այդ տիսուր տարուան աղիտալի դեպքերուն մասին:

Ոչ մեկ ՀԱՅ կրնայ մոռնալ այդ օրը եւ թուականը՝ 7 Դեկտեմբեր 1988, երբ ահռելի չափերով վնասուեցաւ մեր հայրենիքը:

Շատ քաղաքներ ու գիւղեր լրջօրէն վնասուեցան, իսկ 58 գիւղ ամբողջովին կործանեցաւ: Բնակելի շենքերու կեսեն աւելին քանդուեցան, ինչպէս նաև տարբեր ուսումնական հաստատութիւններ, հիւանդանոցներ, ծեռնարկութիւններ եւ գործարաններ, մշակութային կեդրոններ եւ այլ տեղեր:

Սահացողներու թիւը 25.000-է աւելի եղաւ եւ տասնեակ հազարաւոր հաշմանդամներ: 530 հազար հոգի անտուն, անգործ եւ անօթի մնաց:

Սակայն, ողջ աշխարհը միասնաբար ուժի կանգնեցաւ եւ այդ դժուար օրերուն օգնութեան ձեռք մեկնեց հայութեան:

Սփիրքահայերը եւս չանտեսեցին իրենց հայրենակիցները: Երկրաշարժի առաջին ժամերէն հայութիւնը համախմբուեցաւ, եւ միասնականորէն՝ ինչպէս միշտ կ'ընէ դժուար կացութիւններու ժամանակ, բազմակողմանի օգնութիւն հասցուց հայրենիքին:

Մեր գաղութը եւս զանազան ձեւերով օգտակար եղաւ: Ամեն եգիպտահայերը կը մասնակցէին՝ սննդամթերք, հագուստ, դեղորայք հաւաքելով: Նոյնիսկ մեր ազգային վարժարաններու աշակերտներն ալ ուզեցին օգնել իրենց փոքր նուիրատութիւններով:

Իսկ ՀԲԸՍ-ի եգիպտոսի շոշանակին կազմակերպութեամբ Սպիտակի շրջանէն 2 անգամ 30 հայ որբեր հրատիրուեցան Եգիպտոս՝ 15-օրեայ այցելութեամբ, ուր իրենց հոգ տարին, պտըտցուցին եւ բաւական զուարձացուցին, որպէսզի քիչ մը հեռանան իրենց տիսուր կեանքեն:

Այս ամենը մեզի ցոյց կու տայ թէ որքան անպատրաստ էր խորհրդային կառավարութիւնը այդպիսի աղետ մը դիմագրաւելու: Բայց այդ առիթով պարզօրէն երեւաւ նաեւ սփիրքահայերուն զօրաւոր սերը իրենց հայրենիքին հանդէա:

Սակայն, դժբախտաբար, այլեւս այդ օրերուն պէս չէ մեր գաղութին վիճակը, որ կամաց-կամաց կ'օտարանայ եւ կ'անտեսէ իր հայրենիքը: Ես շատ յստակօրէն այսպէս զգացի, երբ այդ օր, մեր դպրոցի առտուան հայերէնի ընթերցանութեան ժամանակ պէտք էր բոլորը մեկ վայրկեան լուր կենային՝ իբր յարգանք եւ յիշատակ այդ երկրաշարժին անմեղ զոհերուն յիշատակին: Իմ քովս կեցած աշակերտներ զգուած կ'ըսէին. «Ինչո՞ւ պէտք է լուր կենանք: Մեզի ի՞նչ երկրաշարժը»:

Այս լսելով ես տիսուրայ որ ներկայ սերունդը այդքան անտարբեր է եւ թոյլ կապ մը ունի իր հայրենիքին հետ:

*Սեւակ Սագայեան
Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարան
Բ. Երկրորդական*





ԱՄԱՆՈՐԵԱՅ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Նոր Տարի. հրաշք մը, երբ բոլորս քանի մը ժամով կը վերադառնանք այս հեքիաթային աշխարհը, որ մանկութիւն կը կոչուի: Կը հաւատանք Նոր Տարուան հրաշքին եւ մեր մէջ ինչ որ տեղ մը, թէկուզ աննշան տեղ մը կը հաւատանք, որ իսկապէս պիտի գայ Կաղանդ Պապան: Ո՞չ, ո՞չ այդ թէլերով կապուած, փոշոտած մօրուքով Կաղանդ Պապան, որ վարժուած ենք միշտ տեսնել, այլ այն՝ մեր երեւակայական Կաղանդ Պապան, որ մեր մանկութեան երազանքները պիտի վերադարձնե, պիտի իրականացնե մեր այս տարուան սպասելիքները եւ թերեւս բարութեամբ պիտի լեցնէ այս դառնացած աշխարհը:

Չեմ գիտեր, արդեօ՞ միայն ես եմ որ «Նոր Տարի» լսելուս պէս կը յիշեմ մանկութենես դրուագներ:

Օրինակ, կը յիշեմ Յայաստան մեր անցուցած Նոր Տարիները, երբ ընտանիքին բարեկամները՝ մօտաւորապէս 20-30 հոգի, կը հաւաքուեին մեր տունը: Ամբողջ տան մէջ աղմկալի մեծ իրարանցում կ'ըլլար: Չնայած կեանքի դժուար պայմաններուն, այնքան սէր եւ ուրախութիւն կար բոլորին մէջ, այնքան մեծ հաւատք, որ եկող տարին պիտի ըլլար աւելի՛ լաւ, աւելի՛ յաջող: Իսկ երբ կը հասնէր ժամը 12-ը, բոլորս դուրս կ'ելլինք մեծ իրավառութիւնը դիտելու եւ Նոր տարուան սկիզբը ազդարարող զանգերուն հետ հեռատեսիլով կը հնչէր Արամ Խաչատրեանի «Վալս»ը: Եւ այսպէս՝ ամէն տարի:

Իսկ վերջերս, երբ դեկտեմբերեան նախատօնական իրիկուս մը կը քալէի, անծանօթ փողոցի մը վրայ լուսնի լոյսին տակ Նշմարեցի շինութիւն մը, որ այնքան ծանօթ կը թուէր, եւ կարդալով շէնքին վրայի «Նամակատուն» գրութիւնը, յանկարծ յիշեցի.....

Առաջին կամ երկրորդ դասարան եի, երբ Նոր Տարին 2-3 շաբաթ առաջ որոշեցի նամակ մը գրել Կաղանդ Պապային եւ անոր յայտնել ինդրանքներս: Մտքերս ժողվելով՝ պաշտօնական նամակ մը գրեցի անոր: Ինդրածութեան մեջ բան մը չէր՝ «աման-չաման», այդպէս կը կոչէի իսաղալիք սպասները, բայց ինծի համար ո՞հ. այդ խաղալիքը մանկութեանս մեծագոյն երազանքներէն էր:

Գրելը վերջացնելէս ետք, հայրիկիս հարցուցի, թէ արդեօք ունե՞ր Կաղանդ Պապային հասցեն, եւ դրական պատասխան ստանալով, չափազանց ոգեւորուած, միասին գացինք նամակատուն՝ նամակս հասցեատիրոջը ղոկելու: Բայց, երբ տեղ հասանք, պարզուցաւ որ արձակուրդային օր էր եւ նամակատունը գոց էր: Յայրիկս խոստացաւ յաջորդ օրը գալ եւ ղոկել: Սակայն ես ալ այդ օրը դպրոց ունեի: Ուստի, նորէն ալ չգիտցայ թէ ան իսկապէ՞ս յանձնեց նամակը թէ ոչ: Բայց կարեւորը որ Կաղանդի օրը «աման-չաման»ս տօնածարին տակ ինծի կը սպասէր: Ուրախութեանս չափ ու սահման չկար: Ուրախ եի ոչ միայն անոր համար որ երազանքս կատարուած էր, այլ նաեւ որ Կաղանդ Պապան կարդացած էր նամակս:

Նոյնիսկ, երբ քանի մը օր ետք դպրոցին մէջ հարց ծագեցաւ տարեկիցներուս միշեւ, թէ արդեօ՞ իրական Կաղանդ Պապա կայ, ես մեծ համոզումով՝ որպէս Կաղանդ Պապայի «իրաւունքներու պաշտպան», կը վստահեցնէի անոնց. «Յարկա՛ կայ, նոյնիսկ ես վերջին անգամ նամակ գրեցի իրեն, եւ նոր տարիին ստացայ ինդրածուն: Եթէ Կաղանդ Պապա չկայ, հապա ատ նուերը ինչպէ՞ս եկաւ»:

Այո՛, թերեւս միամիտ եի. սակայն, կը հաւատամ թէ որքան ալ մեծնանք եւ այդ միամտութիւնը լք մեզ, բոլորիս մէջ միշտ ալ կը մնայ այդ մանուկը: Նոր տարին գալուն պէս ան կ'արթննայ եւ կը յիշեցնէ որ դեռ ամէն ինչ գէշ չէ եւ տիսուր: Կը յիշեցնէ որ մեր առջեւ կայ նո՞ր տարի մը. տա՞րի մը երբ, ո՞վ գիտէ, թերեւս կատարուին մեր երազանքները, ինչպէս իին եւ բարի օրերուն, սակայն այլեւս ո՞չ մեր մանկական «հերոսներու» ծեռքով, այլ՝ մե՞ր, միա՞յն մեր: Զանի որ այս գիտակից տարիքին մենք ենք որ պիտի իրականացնենք մեր երազանքները եւ նպատակները: Մենք՝ մե՞ր ուժերով պիտի փորձենք յաղթահարել կեանքի դժուարութիւնները եւ հասնիլ բարձրունքներու, իսկ ատունք ալ պիտի ըլլան մեր նուերները:

Ծնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ:

Հուսածին Ղազէլեան
Գալուստեան-Նուպարեան Ազգային Կարժարան
Բ. Երկրորդական



2013-2014 ուսումնական տարեշրջանի Ա. կիսամեակի ընթացքին, Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանի Գ. Պատրաստականի եւ Ա., Բ., Գ. Երկրորդական կարգերու աշակերտութիւնը, Յայերենի իրենց դասապահերէն մէկուն ընթացքին մտերմիկ հանդիպումներ ունեցան համապատասխանաբար մանկապարտէզի «Ծաղիկ» եւ Նախակրթարանի Ա., Բ., Դ. կարգերու աշակերտուներուն հետ:

Երկու շաբաթ անց, փոխադարձաբար փոքրերը այցելեցին մէծերուն:

Յանդիպման նպատակներն եղած են. հայերենի ընթերցանութեան եւ բառապաշտի զարգացում, սէր՝ դէպի մայրենի լեզուն եւ ընթերցանութիւնն ընդհանրապէս, բարձր դասարանցիներու մօտ կազմակերպութեան եւ դասաւանդութեան հմտութիւններու զարգացում, եւ խոնարի դասարանցիներու ու մէծերու միջեւ եղած անջրպետի յաղթահարում եւ բարձր դասարանցիներուն մօտ հոգատարութեան ու սիրոյ արծարծում փոքրերուն հանդէա:

Ստորեւ կը ներկայացնենք Բ. Երկրորդականի աշակերտներու գրած շարադրութիւններէն երկուքը (հարազատ մնալով բնագրերուն ու միայն աննշան հպումներ եւ ուղղագրական սրբագրումներ կատարելով), ուր անոնք անկեղծօրէն յայտնած են իրենց զգացումները՝ վերոնշեալ հանդիպումներուն մասին դասարանին առաջադրուած յանպատրաստից գրաւորներու միջոցով:

Արդար զլլալու համար, յետագային պիտի ներկայացնենք ուրիշ գրաւորներ եւս, քանի որ տարբեր աշակերտուներ իւրայատուկ ապրումներով եւ գեղեցկութեամբ արտայայտած են իրենց զգացումները:

Ընթերցողին դատին կը ձգենք եզրայանգումները...

ՄՏԵՐՄԻԿ ՕՐ ՄՔ

Չորեքշաբթի, 5 Դեկտեմբերին մէր դասարանով (Ա. Երկրորդական), այցելութեան գացինք նախակրթարանի Առաջին դասարանի աշակերտուներուն: Յազիւ մտանք ներս, պատիկներէն 3-4 հոգի արդէն գիտէին թէ մենք ինչու այցելած ենք իրենց: Պատիկները ուրախ եին եւ անոնց երեսները կը փայլէին ու լայն, անուշիկ ժպիտ մը ունեին:

Երբ իրենց պատմութիւն մը կը կարդայինք՝ քիչ մըն ալ թատերական ծեւերով, անոնց խնդալու ձայները յոյս տուին ինծի որ հայերը միշտ կան ու պիտի մնան: Այս փոքրիկները երբ մէծնան, շատ հրաշալի մարդիկ կրնան զլլալ: Վստահ եմ, բոլոր աշխարհը հայերուն պիտի ծանօթանայ այս անուշիկ փոքրիկներուն շնորհիւ:

Երբ բառախաղ մը կը խաղայինք, իրենց կազմած բառերը յոյս տուին ինծի՝ թէ մէր Մայր Լեզուն իրենց քով աւելի պիտի զարգանայ, եւ շատ լաւ, մաքուր հայերէն խօսողներ պիտի զլլան: Խսկ երբ պահը վերջացաւ եւ մենք պիտի երթայինք, իրենց երեսներէն կը հասկցուեր թէ կ'ուրգէին մեզի դեռ:



Բայց ինչ որ իրական սրտիս դպաւ. զբուանքի ժամանակ պատիկները կը վագեին, ես ալ կը խաղայի, լսեցի որ այդ փոքրիկներէն աղջիկ մը, առանց ինձի տեսնելու, կ'ըսէր իր քրոջ. «Այսօր Առաջին Երկրորդականը մեզի եկաւ եւ շատ աղուոր ժամանակ մը անցուցինք»:

Այդ մեկ նախադասութիւնը ինձի ուրախացուց ամբողջ օրուան ընթացքին:

Բայց ես այս տարի է որ սկսայ սիրել եւ ուզեցի զարգացնել հայերէնս: Կ'ուզեմ աւելի գիտնալ, ծանօթանալ իմ Մայր Լեզուիս: Ես Երեքշաբթի օրերը չեմ սիրեր, որովհետեւ Հայերէնի պահ չունինք. շատ տիսուր եւ անհամ օր մը կ'ըլլայ:

Ինչ որ կ'ուզեմ ըսել. «Ծնորհակալ եմ այդ գեղեցիկ օրուան համար»:

Գիտեմ, իմ գրածն կարծ է մնացեալներուն քով, բայց այնքան տպաւորուած եմ որ չեմ կրնար բացատրել եւ միակ բառը որ կրնամ նորէն ըսել. «Ծնորհակալութիւն»:

Իրապես հիանալի օր մըն եր:

Դժուար է ինձի բացատրել զգացումներս.....

Սիլվա Պաթաևի
Ա. Երկրորդականի աշակերտուիի

5-12-2013

ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՕՐ ՄՔ

Օր մը, մեր դասարանով Առաջին դասարան այցելեցինք՝ հայերէնի ուսուցչուիին հետ: Երբ Առաջին դասարան մտայ, հին օրերս յիշեցի՝ ամենաաղուոր օրերը որ անցուցած էի այդտեղ: Թեեւ շատ ալ չեմ յիշեր ինչեր պատահած են, բայց որչափ որ կը յիշեմ, շատ աղուոր յիշատակներ ունիմ այդ դասարանէն ներս, անոր համար ալ իրենք ալ պէտք է վայելեն այս անմոռանալի օրերը:

Երբ պատմութիւն սկսանք կարդաւ, իրենք շատ ուրախ եին, ինչպես երբ մեր օրիորդը կը կարդար մեզի համար, շատ կ'ուրախանայինք: Իրենց զգացումները կը հասկնայի....:

Առաջին դասարանին մեջ շատ խելացի եւ զարգացած աշակերտներ կային՝ իրենց տարիքին համեմատ: Շատ ուրախացայ, երբ տեսայ որ ասանկ խելացի աշակերտներ կան դասարանին մեջ:

Պատմութիւնը աւարտելէ վերջ, պատիկ հարցամրցում մը ըրինք որ իրենց զբաղցնենք եւ կրցան պատասխանել հարցումներուն: Այդ կը նշանակէ որ իրենք ուշադրութիւն ըրին՝ հասկցան մեր պատմած պատմութիւնը եւ ըմբռնեցին:

Լաւ է որ ուշադրութիւն ըրին եւ ըմբռնեցին մեր պատմածը, մանաւանդ որ մեր պատմութիւնը քիչ մը երկար էր եւ կը կարծէինք որ պիտի զգուին, բայց չզգուեցան:

Հարցամրցումն վերջ պատիկ խաղ մըն ալ կազմակերպեցինք իրենց համար. «Երիտասարդութիւն» բառը գրեցինք գրատախտակին վրայ եւ ըսինք որ այս բառին գիրերով նոր բառեր կազմեն: Իմ խումբիս մեջ շատ խելացի աշակերտներ կային եւ ես ու ընկերուիին իրենց չօգնեցինք բառեր կազմելուն մեջ, միևնակնին չորս վայրկեանի մեջ 19 բառ կազմեցին, որ շատ լաւ է իրենց տարիքին համար:

Մեւը պատիկ եղած ատենսիս ասանկ խաղեր չեինք խաղար եւ հաւասականութիւն կայ որ մեր հայերէնն աւելի լաւ ըլլայ իրենց հայերէնը:

Վերջապես, կ'ուզեմ ըսել որ շատ ուրախացայ այս հանդիպումով եւ կ'ուզեմ նորէն հանդիպիլ առաջին դասարանցիներուն հետ:

Լորիկ Տրդատեան
Ա. Երկրորդականի աշակերտուիի

5-12-2013



ՄԱՀ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱՌՈՐՈՒԹԻՒՆ ԺԻՐԱՅՐ ՏՐԴԱՏԵԱՆԻ



Խոր ցաւով կը գումենք մահը ժիրայր Տրդատեանի, որ մշտական ներկայութիւն մըն էր Հելիոպոլսոյ ՀՍԸԸ ՆՈՒՊԱՐԵն ներս եւ այն անդամներէն, որոնք կարեւորութեամբ կը յիշուին ակումբին տարեգրութեանց մէջ՝ որպէս մարզիկ եւ վարչական անդամ:

Ժիրայր Տրդատեան կեանքին հրաժեշտ տուաւ 10 Դեկտեմբեր 2013-ին, 82 տարեկանին, առողջական դժուարութիւններ անցընելէ յետոյ:

Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ նոյն օրը, կ.վ. ժամը 3-ին, Հելիոպոլսոյ գերեզմանատան Ամենայն Սրբոց մատրան մէջ:

Կիրամուտքը տեղի ունեցաւ Շաբաթ, 14 Դեկտեմբերին, իր սրտին ամենամօտիկ տեղը եղող ՀՍԸԸ ՆՈՒՊԱՐ մարզակումբին մէջ:

Ողբացեալ ժիրայր Տրդատեան, Հելիոպոլսոյ ՀՍԸԸ-ի պասքեթ պոլի գլխաւոր մարզիկներէն մէկն էր անցեալ դարու 40-ական եւ 50-ական թուականներուն եւ փայլուն մարմնամարզիկ:

Ան վկան եղած է եւ մասնակցած՝ ՀՍԸԸ եւ ՆՈՒՊԱՐ ակումբներու միաձուլումին եւ ականատես՝ 1958-ին ակումբին ներկայ կեդրոնը փոխադրութեան:

Ան մարզակումբին վարչութեան անդամ եւ գանձապահ եղած է անցեալ դարու 80-ական եւ 90-ական թուականներուն:

Ողբացեալը Հելիոպոլսոյ ՀՍԸԸ ՆՈՒՊԱՐը միշտ նկատած է իր երկրորդ տունը եւ այդ մարզակումբին մէջ անցուցած է իր կեանքին մեծագոյն մասը:

Ան նաեւ անդամ էր Գահիրէի ՀԲԸԸ-ին:

Մարզակումբին մէջ իր ձգած պարապը շատ գգալի պիտի ըլլայ:

«Տեղեկատու»ն իր խոր ցաւակցութիւնները կը յայտնէ Տոք. եւ Տիկին Յրայր Տրդատեանին եւ զաւակներուն ու ողբացեալին ազգականներուն, իրենց ունեցած մեծ կորուստին համար:

Բարձրեալէն երկնային հանգիստ կը հայցենք ողբացեալին ու միսիթարութիւն ընտանեկան պարագաներուն:



ՀԵԼԻՈՓՈԼՍՈՅ ՀՄԵՐ ՆՈՒՊԱՐԻ ԿԱՂԱՆԴԻ ՊԱՇԱՐԸ

Ուրբաթ, 20 Դեկտեմբեր 2013-ին, կ.ե. ժամը 1-ին տեղի ունեցաւ ակումբին Տիկնաց Յանձնախումբին կազմակերպած Կաղանդի Պազարը, նախագահութեամբ Տիկին Կասիա ճղալեանի:

Աւանդութիւն դարձած այս պազարին անհամբեր կը սպասեն գաղութիւն անդամները, ուր իրենց տրամադրութեան տակ, ճաշակով շարուած սեղաններուն վրայ կը գտնեն տօնական օրերու յարմար ուտելիքներ, պէս-պէս անուշեղնեներ ու գոյնզգոյն զարդարանքներ:

Երբ օրուան նախագահութիւն բացումը կատարեց, յանկարծակի եռուզեր մը սկսաւ դէպի ճոխ սեղանները, որոնց ետին կանգնած տիկինները հազիւ թէ կը հասնեին յափշտակուած ապրանքները տոպրակներու մէջ դնելու: Ու այսպէս, կես ժամ չանցած, գրեթէ բոլոր սեղանները պարպուած էին:

Օդը արեւոտ ու տաքուկ ըլլալուն, մարգագետնին վրայ շարուած սեղանները շուտով գրաւուեցան ու աւելորդ աթոռ-սեղանի պէտք եղաւ:

Ապա սկսաւ կեսօրուան ճաշի սպասարկու-



թիւնը՝ հոչակաւոր մանթըն, նաեւ պահը բռնողնեռու համար յարմար ուտելիքներու պնակ մը: Մատուցումը արագ ու կանոնակար կերպով կատարուեցաւ:

Փոքրիկները անհամբեր կը սպասէին Կաղանդ Պապային այցելութեան, որ դանդաղ քայլերով, ծանր տոպրակը ուսին, հասաւ կ.ե. ժամը 4-ին: Ան շրջապատուեցաւ փոքրիկներուն ուրախ ու հետաքրքիր աշուկներով: Ամեն ոք ստացաւ իր նուերը ու նկարուեցաւ Կաղանդ Պապային հետ:

Ժամանակը եկած էր վիճակահանութեան, ու բախտաւորները պարգևեներ ստացան: Ժամը երեկոյեան 6-ը անց էր արդէն, երբ ներկաները սկսան մեկնիլ՝ իրենց սիրելի ակումբին մէջ հաճելի օր մը անցընելէ ետք:

Վարձքը կատար օրուան նախագահութիւն Տիկին Կասիա ճղալեանին, նաեւ մարզարանին Տիկնաց Յանձնախումբի անդամութիւններուն, որոնց աշխատանքին արդիւնքն էր այս շատ յաջող ձեռնարկը:

Սուի Ներեւեան-Յակոբեան





ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԴՄ ՆՈՒՊԱՐԻ ԽԹ-ՄԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹ-ԻՒՆԸ

Խթումը այս առիթներէն է, որ ընտանիքի բոլոր անդամները կը հաւաքէ մեկ սեղանի շուրջ. հետեւաբար Յելիոպոլսոյ ՀՄԴՄ ՆՈՒՊԱՐԻ մեծ ընտանիքը եկած էր միասնաբար տօնելու Սուրբ Ծնունդի խթումը՝ Կիրակի, 5 Յունուար 2014-ին:

Գիշերուայ ժամը 9-Են անդամներն ու համակիրները սկսան տեղ գրաւել ճաշակով շարուած ու յարդարուած սեղաններուն շուրջ, մինչ ակումբին մարզիկներէն DJ-ներ Ալէն եւ Վարդան կը հնչեցնէին սիրուած երգեր ու մեղեդիներ:

Սրահին պատերն ու պատուհանները ծածկուած էին փոքրիկ լոյսերու վարագոյրներով, իսկ մուտքին տեղադրուած տօնածառին գոյնզգոյն լոյսերը կը պլայային:

Յետզիետէ սեղաններուն վրայ շարուեցան տեսակ-տեսակ համադամներ ու խանդավառ երաժշտութիւնը պարահարթակ հրաւիրեց շատ մը գոյգեր: DJ-ներ Ալէնն ու Վարդանը, ներկաներուն ճաշակին ու նախասիրութեան համապատասխան, շատ ճիխ եւ այլազան երգացանկ մը հրամցուցին ու բոլորին գնահատանքին արժանացան:

Ճաշի սպասարկութիւնը կատարուեցաւ արագ ու կանոնաւոր կերպով: Կես գիշերուան մօտ, ակումբին ատենապետ Պր. Ժիրայր Տէփոյեան ներկաներուն Նոր Տարին եւ Ս. Ծնունդը շնորհաւորեց ու սկսաւ վիճակահանութիւնը: Քսան բախտաւոր անձեր պարգեւներ ստացան:

Կը շնորհաւորենք ակումբին Տիկնանց Յանձնախումբին անդամուիիները, որոնց կազմակերպած հաւաքոյթ-խրախճանքը այս տարի եւս մեծ յաջողութիւն արձանագրեց:

Սոսի Ներեւեան-Յակոբեան





ՀԵԼԻՈՓՈԼՍՈՅ ՀՄՁՄ ՆՈՒՊԱՐԻ «ՄԱՐԶԱԿԱՆ ՕՐ»Ը



Ուրբաթ, 24 Յունիուս 2014-ին, դպրոց-ներու կիսամեայ արձակուրդին առաջին օրը, ՀԵԼԻՈՓՈԼՍՈՅ ՀՄՁՄ ՆՈՒՊԱՐԻ ժրաշան երիտասարդներէն Սիմոն Տեփոյեան, Հրազդան Գալընեան, Ալիսա Տեփոյեան եւ Վարդան Թերզիապաշեան, «Մարզական Օր» մը կազմակերպեցին ակումբին փոքրիկներուն, պատանիներուն եւ երիտասարդներուն համար:

Նոյն օրը, առաւտեան վաղ ժամերուն, սաստիկ պայթիւնը, որ պատահեցաւ Գահիրէի Ապահովութեան Տեղինութեան շենքին առջեւ, խրչչեցուց շատերուն եւ տունը մնալը խոհեմութիւն նկատելով, ներկաներուն թիւը ակնկալուածէն շատ աւելի նուազ եղաւ:

Սակայն, անոնք, որոնք անտեսելով այդ անախորժ պատահարը փութացած էին ակումբ, վայելեցին ծմեռնային արեւոտ ու մեղմ օդը եւ գուարճացան պատրաստուած խաղերով:

Առաջին առթիւ անհատական եւ երկու խումբերու միջեւ «Foul shot»ի մրցումներ

եղան, որոնց յաջորդեցին վազքի ու ոտնագնդակի կարճ խաղեր եւ ամենահաճելին՝ ակումբին մեջ գանձարշաւ: Փոքրիկներէ ու պատանիներէ բաղկացած խումբերը մեծ եռանդով կը վազվզէին, փնտուելու ու գտնելու համար հանելուկներու պահարանները:

Իսկապէս գնահատելի է կազմակերպիչներուն տարած աշխատանքը: Անոնք մեծ համբերութեամբ կը բացատրէին տարբեր խաղերու կանոնները եւ կը հսկէին որ ամեն ինչ ընթանար կանոնաւոր ու անվտանգ:

Կը մաղթենք որ մօտ ապագային, մանաւանդ որ դպրոցներուն եւ համալսարաններուն կիսամեայ արձակուրդը երկարաձգուեցաւ մինչեւ 22 Փետրուար, նման ձեռնարկ մը եւս կազմակերպուի եւ բոլոր անոնք, որոնք կամքե անկախ պատճառով գրկուեցան «Մարզական Օր»ին, պատեհութիւնը ունենան իրենց մասնակցութիւնը բերելու:

Սոսի Ներետեան-Յակոբեան



ԱՆԴԱՍԱԿԱՆ

ԱՇՔԱԾԱԿԱՆ

ԱՄՈՒՏՆՈՒԹԻՒՆ



Հաճոյքով կ'արձանագրենք ամուսնութիւնը Տիար Կարի Պողոս Պօհճելեանի եւ Օրիորդ Յուրի Միքայէլ Կիրիլեանի, որ տեղի ունեցաւ Կիրակի, 13 Յոկտեմբեր 2013-ին Աղեքսանդրիոյ Ս. Պողոս-Պետրոս Եկեղեցւոյ մէջ:

Օրիորդ Յուրի Միքայէլ Կիրիլեան ՀԲԸՍ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիւղի եւ Ս. Պողոս-Պետրոս Եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամուիի է:

Տիար Կարի Պողոս Պօհճելեան Աղեքսանդրիոյ Թեմական ժողովի անդամ՝ Յառաջդիմասեր Մշակութային Ընկերակցութեան ատենապետ եւ Ս. Պողոս-Պետրոս Եկեղեցւոյ «Լուսաւորիչ» երգչախումբին երգեհոնահարն է:

Կը շնորհաւորենք նորապսակ զոյգը, իրենց ծնողները՝ Տիկին Արմենուի Պօհճելեանը, Տիար Միքայէլ Կիրիլեանը, Տիկին Զապէլ Գարթալեանը ու հարազատները:

Իսկ նորապսակներուն սիրով, երջանկութեամբ եւ ջերմութեամբ լեցուն համատեղ կեանք մը կը մաղթենք:

